

ՅՈՒՇԱԳՐԱԿԱՆ

- ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Յովհաննէս ԻԳ. Սրբգ. Քաճառապետի անմոռաց յիշատակին 65
- ՊԶՏԻԿԵԱՆ Զ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. - Ն. Ս. Պողոս Զ. Սրբազան Քաճառապետ 76
- ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Վեհ. Խորէն Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 80
- ՏԵՐ-ՆԵՐՍԵՍԻԱՆ Զ. Ն. - Ի յիշատակ Գեղարայծառ Զ. Սահակ Եպսկ. Կողեանի 159

ՊԱՏՄԱԿԱՆ

- ՊԵՏՐՈՎԻՉ ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. - Ստեփանոս Ե. Սալմաստեցի Կաթողիկոս Էջմիածնի (Շար. Է. Վերջ) 82
- ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՄԻՔԱՅԷԼ. - Հայաստանի բերդերը - Կայենոյ կամ Կայեան բերդ 111
- ՔԻՒՐԴԻԱՆ Ե. - Հետաքրքրական վաւերագրութիւն 122

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- ԶՐԱՔԵԱՆ Զ. ՔԵՐՈՎԷԼ. - Կաթողիկէ թուղթերու Խմբագիր Մեկնութիւն - Զ. Յիշատակարաններ (Շար.) 101

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

- ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ ՏՈՔԹ. Ե. - Կիլիկեան դէտեր 108

ԳՐԱԿԱՆ

- ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. - «Հայ աշուղներ» Գ. Թարգմանչեան 126
- ՃԱՆԱՇԵԱՆ Զ. ՄԵՍՐՈՊ. - Կապոյտներու երգը. ես կը սիրեմ - Ոսկեղէն ցան - Խաղաղիկ - Փոքրիկ սահմիր - Ուղիներ 132
- ԹԷՔԵՐԻԱՆ ԵՍԷՆ. - Սին սասկեա տղան 136
- ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՎԱՀԱՆ. - Շուշան վարդի (Թատերգութիւն երեք արարով) Առաջին արար (Շար.) 137

ԳՐԱՆՈՍՏԱԿԱՆ

- ՊԶՏԻԿԵԱՆ Զ. ՅԱՐՈՒԹԻՒՆ. - «Հայոց գիրք», Կ. Տիրատուրեան 149
- «Հայկական ՍՍՌ Ատլաս» 149
- ՔԻՒՐԴԻԱՆ Ե. - «Պաղտասար Դալիր» 150
- «Անանիա Շիրակացու Լուսնի Պարբերաշրջանները» 153
- «Լեւոնապետի մասնակցութիւնը Դաւիթ Բեկի ապստամբութեան», Վ. Ա. Պարսամեան 154
- «Ազատագրական պայքարը Դաւիթ Բեկի գլխաւորութեամբ», Զ. Ա. Կրեակեանի 155
- ՅՈՎՀԱՆՆԵՍԻԱՆ Զ. ՎԱՀԱՆ. - «Լուսնութեան», Խաչիկ Ամիրեանի 155
- «Իմ մասիս - Զոյգ աչերէս», Վարդերես Գարակէօղեանի 155
- «Արեւուն տակ», Արսէն Ճանեանի 156
- «Ներշնչման պահեր», Զորայ Ս. Գասապեանի 157
- «Անձրեւի կաթիլներ», Օննիկ Կիւրճեանի 158
- «Օտար գրականութիւն», (Թրգ. Յովհաննէս Մարգ) 158

MEMORANDUM

- DER-NERSESSIAN P. NERSES. — A la mémoire de S. S. le Pape Jean XXIII^e 65
- BEZDIKIAN P. HAROUTHUN. — S. S. le Pape Paul VI^e 76
- DER-NERSESSIAN P. NERSES. — S. B. Khorène I^{er}, Katholikos de Cilicie 80
- DER-NERSESSIAN P. NERSES. — A la mémoire de S. Excellence Mgr. Sahak Koghian 159

HISTOIRE

- PETROWITCZ GR. — Etienne V^e de Salmaste, Patriarche d'Etchmiadzine (Suite et fin) 82
- HOVHANNESSIAN P. MICHEL. — «Les forteresses de l'Arménie» - La forteresse de Kayan 111
- KURDIAN H. — Un document intéressant 122

PHILOLOGIE

- TCHERAKIAN P. CHERUBIN. — Chaînes exégétiques des Epîtres Catholiques: Introduction, VI (Suite) 101

GEOGRAPHIE

- DER-GHAZARIAN Doct. H. — Les fleuves de la Cilicie 108

LITTERATURE

- YEREMIAN ARAM. — «Les troubadours arméniens» de G. Tharverdian 126
- DJANACHIAN P. MESROP. — Le chant des bleus: J'aime - Champ d'or - Jouet - Petite urne - Les chemins 132
- TEKERIAN JOSEPH. — Ce garçon courageux 136
- HOVHANNESSIAN P. VAHAN. — «Chouchane Varténi». Drame en trois actes. Acte I^{er} (A suivre) 137

RECENSIONS

- BEZDIKIAN P. HAROUTHUN. — «Les lettres arméniennes» de K. Tiratourian 149
- «Atlas de l'Arménie SSR» 149
- KURDIAN H. — «Bagdassar Thir» 150
- «Les périodes lunaires d'Ananie de Chirak» 153
- «La participation des Arméniens de la Pologne à la révolution de David Bek», de V. A. Barsamian 155
- «La révolution de David Bek», de H. A. Kniazian 155
- HOVHANNESSIAN P. VAHAN. — «Loumoumba», de K. Amirian 155
- «Sur moi même - Par mes yeux», de V. Karagheuzian 156
- «Sous le soleil», de A. Djanian 156
- «Moments d'inspiration», de Z. S. Kassabian 157
- «Gouttes de pluie», de O. Gulmézian 158
- «Littérature étrangère» (Tr. par J. Mard) 158



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ.

ՍՐԲԶ. ՔԱՃԱՌԱՅԱՊԵՏԻ ԱՆՄՈՌԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս (Յովհ. Ա. 6)

1963 թուականին Հոգեդալատեան տունը՝ եկեղեցական պատմութեան մէջ բացառիկ ու անմոռանալի թուական մը պիտի կազմէ: Աշխարհ համայն խորանի մը շուրջ հաւաքուած, տիրուք եւ ողբերգական, լուսնու աղօթական, հեծկաւուն ուղերձ մը կը բարձրացնէր առ Աստուած: Հոգեդալատի մէջ էր Յովհաննէս ԻԳ. Սրբգ. Քաճառապետը, ամէնուն սիրելի Տիեզերական Հայրերը. Է. ամէնքը, անխորհրդաւոր զաւանանքէ ու կրօնքէ, ամէն ցեղէ ու զոյնէ, սեւեռուն զէպի պատուհան մը Է. բացթողեալ խորան մը, որոնց նկարները կը շրջին արար աշխարհ՝ հեռաւոր սիրի ցոլերով, ծունկի էին եկեր արցունքոտ արօթիւններով հեւ ի հեւ:

Երկհազարամեայ պատմութեան ընթացքին առաջին անգամն էր, առաջին պահին իսկ էր որ Սուրբ Եկեղեցին չունէր թշնամի. ամէնքը եղբայրացած էին բարի Հովտապետին մահուան անկողին շուրջ. մինչ այդ անկողինն ինքնին դարձ

ձած էր զահ Է. խորան միաժամանակ. զահ՝ ուրիշ սէր միայն կը քարոզէր. խորան՝ ուր զերազոյն զոհ մը կը կատարէր. զոհ՝ սիրոյ, եղբայրութեան Է. միութեան:

Վայրկեանէ վայրկեան, հեւ ի հեւ, երկրապաշտ չորս ծայրերէն, ամէնքը ծայրաստիւծի ալիքներուն տուած ականջներն, զիշեր ու ցերեկ կը հսկէին մեծ զոհին հետ: Յոյսի ծփանք մը կ'ուռէր յանկարծ, բարեօրոճի փոքրիկ նշաններ սրփոտելով երկրէ երկիր. աւա՛ղ. խաբուսիկ ու վաղանցուկ բոյլ մը միայն: Կեանքի ու մահուան պայքար մը կը մղուէր այդ նորօրինակ խորանին վրայ. կեանքի ու մահուան պայքար մը կ'ապրէր տիեզերքն համայն:

Ու մաղթանքի հեռադիրներ կը հասնէին զէպ զէպ. աղօթքներ կը բարձրանային խնկաւետ, մրմունջներ կը տարածուէին եռանդուն:

«Կը հայցեմք առողջութիւն մեր հասա-

րակաց հոր» կը հեռագրէին Աւստրալիայէն չորս բողոքականներ:

«Կ'աղօթեմ Ձեր Սրբութեան համար» կ'ըսէր Պուտտայական մը:

Յաւի ու վշտի ահաւոր հարուածին տակ բեկբեկ, յոյսի հոյակապ երկնակամար մը կը կազմէին այս բոլոր իղձերն ու աղօթքները, կամուրջ մը սիրոյ եւ վշտակցութեան, ձգուած ընդ մէջ Վատիկանի եւ համայն աշխարհի:

«Կ'աղօթեմ Ձերդ Սրբութեան անմիջական առողջութեան համար, որքան անաստուած մը կարող է աղօթել» կը հեռագրէր անհաւատ մը:

«Ձեմ գիտեի աղօթել — կ'ըսէր ուրիշ մը — բայց փոքրիկ զաւակս կ'աղօթէ Ձեզի համար ու ես ալ նոյնը կը կրկնեմ»:

Յովհաննէս ԻԳ. Սրբղ. Քահանայապետի մահուան անկողնին առջեւ այսպէս կը փղձկէին ամենակարծր սրտերն անդամ. դարձի կու գային շատեր: Կարծէք կը կրկնուէր Գողգոթայի աննման տեսարանը. հեթանոս հարիւրապետին հաւատքը կ'արծարծէր շատերու մէջ:

«Այս անկողինը խորան մըն է. իսկ խորանին՝ գոհ մը հարկաւոր է. ահաւասիկ, պատրաստ եմ»: Ահա՛ Սրբղ. Քահանայապետին խօսքը, մտածութիւնն ու համակ էութիւնը՝ այդ երկար, 92 ժամ տեւող հողեվարքի ընթացքին:

Մէջ ընդ մէջ մահաբուռի եւ լուսաւոր վայրկեաններու՝ յայտնութիւններ, հոգեկան տառապանքի եւ համակամութեան զգացումներ, միտքարական շողեր է որ կը ցոլային այդ խորան — անկողինէն: Յաւ, վիշտ, տառապանք, զարմանք ու քաջալերանք կ'աղղէին մեզի ալ, մահասարսուռ եւ հիասթափ:

Աշխարհի չորս ծագերէն, մինչեւ անգամ վարչապետներ, կրօնապետներ, որոնք տարիներէ կամ դարերէ ի վեր խղած էին ամէն յարաբերութիւն վատիկանի հետ, կը փութային հեռագրել համակրութեան եւ ցաւակցութեան զգացումներ՝ յայտնելով թէ հոգեւին միացած են տառապող Քահանայապետին հետ: Նիւ Եորքի հրեայ Բարոնապետը աղօթք-

ներ կը յանձնարարէր իր հաւատացեալներուն, ըսելով Յովհաննէս ԻԳ. Քահանայապետի մասին թէ «մեր ալ Հայրիկն է». նմանապէս Լոնտրա, Փարիզ:

Պոլսոյ յունաղաւան Տիեզերական Պատրիարքը՝ Ամենապատիւ Աթենագորաս, մտերիմ բարեկամ Սրբղ. Պապին, ջերմազին կ'աղերսէր Տիրամօր, իր սրբիներուն հետ, Սրբազան Հիւանդին համար:


Արգարեւ Յովհաննէս ԻԳ. Սրբղ. Քահանայապետը ստեղծած էր աշխարհի մէջ, յատկապէս քրիստոնեաներու միջեւ փոխադարձ հասկացողութեան եւ եղբայրական սիրոյ նոր միջնորդութիւն, ու մահաւանդ Տիեզերական Ժողովի ձեռնարկով՝ հսկայ քայլ մը առած էր դէպի միութիւն. իր մահով՝ այդ քայլը աւելի եւս հսկայացաւ. ու մօտեցան ժամանակները իրականացնելու Քրիստոսի իսկ բաղձանքը, ամբողջական սերտ միութիւն համայն քրիստոնէութեան, որ միակ հօտն է Քրիստոսի:

ԿՆՆԴԱՆԻ ԶՈՂԸ

26 Մայիս 1963, Կիրակի. — Սրբղ. Քահանայապետը կէսօրին չի երեւիր իր աշխատասենեակի պատուհանէն, Ժողովուրդին բաշխելու կիրակնօրեայ օրհնութիւնը: Ստամբուլի հիւանդութիւնը անցեալ աշունէն իսկ կը տանջէր զինք. երկար խնամքներէ ետք, բարւոքում մը նշմարուած էր վերջերս. բայց յանկարծական արիւնահոսութիւն մը եւ վերահաս տրկարութիւն մը թոյլ չեն տար կատարելու իր ամէնօրեայ ամենաթեթեւ աշխատանքներն անդամ. բժիշկները բացարձակ հանգիստ կը յանձնարարեն: Ստամբուլի քաղցկեղը կը մաշեցնէ եւ կը հիւծէ Սրբղ. Քահանայապետին առողջ մարմինը: Գիտակից է. անոյշ եւ համակամ ժպիտի մը տակ կը ծածկէ ամէն ինչ:

27 Մայիս, ԲՆ. — Ընդհանուր բարւոքում կը նշմարուի. բարեմաղթութեան հեռագրերն կը հասնին Վատիկան, ամէն կողմէ:

28 Մայիս, ԳՆ. — Երեք բժշկապետներ



կը հսկեն Հիւանդին մօտ. փրօֆ. Կասպարրինի, Մածծոնի և Վալտոնի: Վատիկանեան օրաթերթը կը յայտարարէ թէ արեւնահոսութեան երեւոյթները դադարած են եւ սննդառութեան աղբու միջոցներ կը կիրարկուին:

29 Մայիս Դշ. - փրօֆ. Մածծոնի կը հեռանայ Վատիկանէն: Սրբղ. Քահանայապետին վիճակը կը դիմէ դէպի բարւոյն: Յուզիչ հեռազրոյսներ կը հասնին Յունաստանէն, Պուլկարիայէն, Ֆրանսայէն:

30 Մայիս, Եշ. - փրօֆ. Կասպարրինի եւս կը վերադառնայ Պոլսի: Լուսազոյն պայմաններու մէջ է Սրբղ. Պապը: Տագնապը անցած է: Սրբղ. Քահանայապետը մտադրած էր այս շարաթիւն ամբողջ անցընել հոգեւորական ներանձնութեամբ, եւ ատոր համար ազօթք խնդրած էր բոլոր Եպիսկոպոսներէն եւ հաւատացեալներէն. անակնկալ հիւանդութիւնը փոխած էր այս ծրագիրը: Փրօֆ. Կասպարրինի կը յայտարարէ թէ Սրբղ. Քահանայապետը իր երկաթեայ կամքով եւ իր հանգարտութեամբ միայն կը յաղթահարէ իր հիւանդութիւնը:

31 Մայիս, Ուրբաթ. - Յանկարծակի կը ծանրանայ Սրբղ. Պապին առողջական վիճակը: Կէս զիշերէն ասդին, շնչադեւութեան վիճակ մը խանգարում ստեղծած է արեան շրջանային զրութեան մէջ: Միտքը պայծառ կը մնայ: Լիովին դիտակից իր վիճակին ծանրութեան, օրինակելի համակամութեամբ կը համբերէ բոլոր ցաւերուն, որոնք կը սաստկանան կէսօրէն վերջ: Կուրապի բորբոքում մըն ալ ծայր տուած է: Աշխարհ ամբողջ ցնցուած է: Ամբոխ մը հսկայական արդէն հաւաքուած է Ս. Պետրոսի հրապարակին մէջ. լուրերու կը սպասեն տենդոտ: Ժամը 16-30ին սուրբ պատարագ մը կը մատուցուի Սրբղ. Քահանայապետին մօտ: Հիւանդը կը հետեւի բարեպաշտօրէն: Արարողութենէն ետք, Սրբղ. Քահանայապետը, յոգնած եւ տկար ձայնով կ'ըսէ. «Մեկնելու պահուս՝ կը փափաքիմ շնորհակալ ըլլալ Թիւրքմեններու Դասին:

Ես գոհ մըն եմ իբրեւ խորանի մը վրայ դրուած. գոհ մը՝ Ս. Եկեղեցւոյ, Տիեզերական Ժողովին եւ աշխարհի խաղաղութեան ի նպաստ»: Երեկոյեան ժամը 9ին կը կորսնցնէ մտքի պայծառութիւնը. կը մտնէ մահաքունի մէջ: Գիշերը, ուշ ժամու, Միլանէն Վատիկան կը հասնին, Ծիրանաւոր Մոնթինիի հետ (ապագայ Պապ), սաւառակով Սրբղ. Քահանայապետին երեք եղբայրները եւ քոյրը:

1 Յունիս, Շաբաթ. - Առտուան 2-50ի տակները, լուսաւոր պահու մը, կը ճանչնայ իր սիրելիները, կ'ողջունէ զանոնք մէկիկ մէկիկ, տալով անոնց անունները. Սաւերիոյ, Ալֆրեսոյ, Ճիուզեփիէ, Աստուեթա: Կ'օրհնէ զանոնք՝ կրկնելով Աւետարանի խօսքերը. «Ես եմ Յարութիւն եւ կեանք... Յիսուս... Յիսուս...»: Առտուն կանուխ, արշալոյսէն առաջ, արդէն անթիւ հաւատացեալներու աչքերը սեւեռած են դէպի կիտախակ պատուհանը: Հոն, վերը, երրորդ յարկի սենեակին մէջ, 40 ժամէ ի վեր Սրբղ. Պապը կը պայքարի մահուան դէմ: Սիրտը զօրաւոր է. մարմինը տոկուն. բայց ջերմը բարձր է: Միլիոնաւոր մարդիկ, ամէն աղկէ, դաւանանքէ, գոյնէ, դասակարգէ, մանաւանդ բանուորներ, հոգեպէս միացած են տենդադին, Ս. Պետրոսի հրապարակին վերայ սպասողներուն եւ ազօթողներուն: Ակնկալութիւն եւ յուսալքում փոխն ի փոխ կը յայտնուին դէմքերուն վրայ: Հեղինակաւոր ձայներ կ'ըսեն՝ թէ մարդկային հնարքները ալ չեն կրնար փրկել Քահանայապետին կեանքը: Բժիշկները տաղ-նապով վերադարձած են Վատիկան: Թըմբեցուցիչ ներարկումներով կը ջանան մեղմացնել սարսափելի ցաւերը: Լուսաւոր վայրկեանի մը, Սրբղ. Քահանայապետը կը խօսի բժշկապետին հետ, չնորհակալ կ'ըլլայ կատարած խնամքներուն համար: Եօթը ժամ տեւող մահաթմբիկէ մը վերջ, ահա դարձեալ միտքը կը պայծառանայ. նշմարելով իր ազդականները՝ կ'ըսէ. «Մի մտաւոգուիք ինձի համար. ես պատրաստ եմ մեկնելու շուտով. մեմ քիտի շարունակեմ գիրար սիրել երկըն-

քէն. ահա կ'երբամ»: Ու թիչ վերջ կ'աւելցնէ. «Հիմա լալու ատեն չէ. այս վայրկեանը՝ ուրախութեան եւ փառաւորութեան վայրկեան է: Մահով նոր կեանք մը կը սկսի. փառաւորութիւն ի Քրիստոս: Ես քայլ առ քայլ հետեւեցայ իմ մահուան. այժմ դանդաղօրէն կը դիմեմ դէպի իմ վախճան: Կը ցանկամ անջատուիլ եւ միանալ Քրիստոսի: Ուրախ եմ այն խօսքերուն համար որ ինձի ուղղութեան քիտի երբանք Աստուծոյ Տունը...: Հանգարտ եմ. միշտ փափաքած եմ կատարել Աստուծոյ կամքը... միշտ... միշտ...»: Դարձեալ միեւնոյն օրը, ութը ժամ տեւող մահաքունէ մը վերջ. արթուն կը հետեւի հոգեվարքի ազօթքներուն, զոր իր շուրջ կը կատարէին. դարձեալ կ'օրհնէ զամէնքը, կը նուիրէ իր կեանքը Եկեղեցւոյ համար, Տիեզերական Ժողովին համար, խաղաղութեան համար ու կ'աւելցնէ. «Կը տառապիմ ցաւերով. բայց կը տառապիմ սիրով: Խորանին՝ գոհ մը հարկաւոր է. ահաւախիկ, պատրաստ եմ: Աչքիս առջեւ յստակ կը տեսնեմ իմ հոգւոյս վիճակը, Տիեզերական Ժողովը, Ս. Եկեղեցին. Եղիցին մի... Եղիցին մի...»:

2 Յունիս, Հոգեգալուստ. - Առաւօտեան դէմ, դարձեալ սուրբ պատարագ կը մատուցուի Հիւանդին մերձաւոր մէկ սենեակին մէջ: Սրբազան Պապը կը հետեւի եռանդով. ապա կ'արտասանէ «Մեծացուցէ» զահարանական երգը ու կը մրմնջէ. «Կը ցանկամ միանալ Քրիստոսի. կը ցանկամ վերադառնալ իմ Աստուծոյս...»: Մինչ վերջ, Քահանայապետին կեանքը ճրագի նման կը մարի, հանգարտ ու խաղաղ, ցաւի եւ սիրոյ մրմունջներով, վաղար, ցաւի եւ սիրոյ մրմունջներով, վաղար՝ Ս. Պետրոսի հրապարակը հաղարտուր հաւատացեալներու ուխտատեղի դարձած է: Կ'ազօթեն ու կու լան ամբողջ աշխարհի մէջ: Հիւսիսային Ամերիկայի մէջ, միաժամանակ 46 միլիոն կաթողիկէներ կ'ազօթեն: Անգլիոյ մէջ միասին կ'ազօթեն կաթողիկէ եւ անգլիկան, մեթոտիստ եւ երիցական. նոյնպէս Գերմանիա, Ֆրանսա, Պոլսիք, Եւն...: Ռուսաստանի որթողօք բոլոր եկեղեցիներ-

ուն մէջ ազօթք կը կատարուի. Մոսկուայի հրէական Ժողովարանին մէջ՝ մահամերձ Պապը կը յիշատակուի յուզումով. խուռն բազմութիւն մըն ալ լեցուած է Մոսկուայի Փրանսական կաթողիկէ եկեղեցին: Կ'ազօթէ նաեւ մահամերձ Պապը. «Կ'ազօթեմ Եկեղեցւոյ համար, մահուկներուն համար, կղերիկներուն համար, քահանաներուն համար, եպիսկոպոսներուն համար, որպէս զի սուրբ ըլլան: Կ'ազօթեմ բոլոր աշխարհի համար... Աստուած... հիւանդները, աղիւսները, բանտարկեալները, աղէտեալները...: Աւելի քան երբեք միացած կը ըզգամ ինքզինքն անոնց հետ՝ որոնք կը տառապին հիւանդանոցներու կամ տուններու մէջ... զանազան մեղքով»: Ու կը կրկնէ, կը կրկնէ, իրիկուան դէմ, ժամը 21ին. «Եղիցին մի... Եղիցին մի...»:

3 Յունիս, Բշ. - Յովհաննէս ԻԳ. Քահանայապետին վերջին օրն է. կը կրէ, կը տառապի, կ'ազօթէ համակամ. մահաքունը կը տիրէ: Չեռքերուն մէջ սեղմած է խաչելութիւն մը. կը մտածէ իր հոգեզաւակներուն վրայ. կը մեռնի անոնց համար. կը մեռնի Քրիստոսի հետ եւ Քրիստոսի նման, կը մեռնի աշխարհի փրկութեան եւ խաղաղութեան համար: Ս. Պետրոսի հրապարակին վրայ, 150 հազար հաւատացեալներու լուռ եւ ամփոփ մասնակցութեամբ կատարուած Ս. պատարագը, բացօթեայ, նոր աւարտած է. երեկոյեան մթնշաղն արդէն իջած է. ամբոխը զեռ ցրուած չէ. ամէնուն աչքերը արցունքով սեւեռած են դէպի Կիտախակ պատուհանը: Աշտարակէն կը հնչէ յանկարծ մահազանգը, թաւ, ընդհատ. լռած են ամէնքը. չկայ շշուէ: Կը մարի կիտախակ պատուհանին լոյսը: Ժամը 19-49:

Յովհաննէս ԻԳ. Քահանայապետը ոչ եւս է:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍՈՒԳ

Կայծակի արագութեամբ բոթը կը ծաւալի աշխարհի չորս ծագերը: Ծունկի կու գան ամէնքը արտասուախառն: Մեռած էր

աշխարհի Հայրիկը, Եկեղեցւոյ Հայրիկը, քրիստոնեաներու Հայրիկը. բանտարկեալներու, բանուորներու, կոնտորավարներու, աղքատներու Հայրիկը. մեռած էր, նոյնիսկ, հեթանոսներու եւ անհաւատներու Հայրիկը. զաղբած էր բաբախելէ ալի սքանչելի սիրտը, որուն նըմանը թերեւս չէր եկած աշխարհ:

Դաղբած էր Աստուծոյ առաքելին քարոզութիւնը. մեռած էր Յովհաննէս ԻԳ. որ իր կեանքով ու մահով ուրիշ բան չէր ըրած, բայց եթէ շարունակել Քրիստոսի զործը, Քրիստոսի նման. սիրել, աշխատել եւ մեռնիլ Աստուծոյ որդիներուն միութեան եւ խաղաղութեան համար:

Եւ ահա ցաւակցական անհատնում հեռազիններու թռիչքը աշխարհէ աշխարհ. 91 ազգերու զերազոյն իշխանութիւններ կը խոնարհին պաշտելի Հայրապետին յիշատակին առջեւ: Առաջին երեք օրերու ընթացքին՝ Ս. Աթոռ կը հասնին տասը հազար հեռազին ու տասը հազար նամակ:

Ու կը հեռազին քրիստոնեայ բոլոր յարանուանութեանց Պետերը, յարգանքի ու վշտակցութեան ամենախորին զգացումներով:

Ն.Ս.Օծ. Տ. Տ. Վաղդէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց կը հեռազին էջմիածինէն.

«Au nom de l'Eglise Apostolique Arménienne nous participons à votre grand deuil et devant l'autel de la Sainte Etchmiadzine nous prions pour la paix de l'âme de Sa Sainteté Pape Jean XXIII. Que Dieu reçoive avec douceur sa belle âme dans le séjour éternel des âmes justes. Que Dieu couronne avec succès la sainte œuvre de la paix mondiale pour laquelle le défunt Souverain Pontife fut un ardent prieur pendant sa vie. Que Dieu garde inébranlable et glorieuse votre grande Eglise. Avec amour en Christ».

Ն.Ս.Օծ. Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, կը հեռազին Անթիքի:

Sommes profondément émus décès

Sainteté Pape Jean XXIII immense perte pour l'Eglise chrétienne. Jean XXIII était serviteur inspiré de l'Evangile; sa vie fut un témoignage de charité du Christ. Au nom du clergé et des fidèles de l'Eglise Arménienne du Catholicos-sat de Cilicie présentons condoléances et profonde sympathie. Prions pour la paix éternelle son âme et prospérité de l'Eglise Catholique.

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան, Պատրիարք Հայոց Երուսաղէմի, կը հեռազին Երուսաղէմէն.

On the sad occasion of the irreparable loss suffered by catholic world by demise of its great and illustrious spiritual leader His Holiness Pope John XXIII we present in our Name and in the Name of our patriarchate in Jordan our deepfelt condolences and sincere sympathy. May almighty grant peace to His soul.

Ամենապատիւ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեան, Պատրիարք Հայոց Թուրքիոյ, կը հեռազին Իսթանպուլէն.

As you deliver over to eternity Holiness Pope John XXIII we share your bereavement. He served christendom and humanity through death as much as during lifetime. May God grant heavenly happiness to His soul. Praying for successor in His spirit and Church unity¹.

Առաջին անգամն է պատմութեան մէջ որ Հայ Առաքելական Լուսաւորչական Եկեղեցւոյ Նուիրապետութիւնը լրիւ կը մասնակցի Տիեզերական Եկեղեցւոյ սուղին, հրապարակաւ:

ԳԻԻՎԵՆ ԴԵՊԻ ԳԱՀ

Տուած ենք, ուրիշ առիթով, կենսազրական գիծերը Յովհաննէս ԻԳ. Սրբազան Քահանայապետին: Կը վերակոչենք համառոտակի:

1 Այս հեռազինները տեղի ունեցան L'Osservatore Romano, 1963, 14-15 Giugno, CI, N. 137 (31.309) pg. 4.

Ծնած է 1881ի Նոյեմբեր 25ին, Պերկամոյի մերձակայ՝ Սոթթոյ իլ Մոնթէ զիւլակին մէջ: Գեղջուկ Ռոնքալլի ընտանիքի զաւակ, ժառանգած է հարուստ սիրտ մը, սիրտ մը բարեպաշտ ու զգայուն:

1904ին քահանայ կը ձեռնադրուի՝ ուսումնական փայլուն շրջանէ մը ետք: Այնուհետեւ մինչեւ առաջին աշխարհամարտը՝ կ'աշխատի Պերկամոյի սրբակեաց եպիսկոպոսին, իբր անձնական քարտուղար. միանգամայն կը դասուանդէ եկեղեցական պատմութիւն եւ հայրախօսութիւն՝ Պերկամոյի Դպրեվանքին մէջ: Իր մասնակցութիւնը կը բերէ 1914-18ի պատերազմին, իբր բանակի զինուորական մատրանապետ սպայ: Պատերազմէն ետք՝ կը նուիրուի կաթողիկէ շարժումի տարածման ի նպաստ երկուստեայ կազմակերպութեանց: 1921-25 կը զործէ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի շարքերուն մէջ: 1925ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս: 1925-34 կը վարէ Պուլկարիոյ Առաքելական Այցելուի պաշտօնը: 1934-1944 կը մնայ Իսթանպուլ՝ իբր Առաքելական Ներկայացուցիչ Թուրքիոյ եւ Յունաստանի: 1944-52 կ'անցնի Փարիզ՝ Առաքելական Նուիրակի բարձր պատասխանատուութեամբ: 1953-58, իբր Ծիրանաւոր Պատրիարք Վենետիոյ՝ կը նուիրուի հովուական կեանքի: 1958-1963 Քահանայապետ Կաթողիկէ Եկեղեցւոյ: Իր քահանայապետութիւնը կը տեւէ 4 տարի, 7 ամիս եւ 6 օր:

ԼՈՒՍԱՇՈՂ, ՀԵՏՔԵՐՈՒ ՎՐԱՅԷՆ

1958ի Հոկտեմբեր 28ին, երբ Քահանայապետական Գահը բարձրացաւ Անճելոյ Ճիւղեփիէ Ռոնքալլի Ծիրանաւոր եւ կոչուեցաւ Յովհաննէս ԻԳ. Պապ, չափեր, նկատի առած անոր առաջացած տարիքը, կը խորհրդածէին թէ իր քահանայապետութիւնը պարզապէս անցման շրջան մը պիտի ըլլար, ընթացիկ զործերու միայն կատարումով: Եւ սակայն, իր կարճ տևողութեամբ, Յովհաննէս ԻԳ. Պապի քահանայապետութիւնը ունեցաւ բացառիկ-

օրէն սքանչելի բեղնաւորութիւն մը: Ճամբայ մը բացաւ ան, նոր ուղի մը, որ նոր դարաշրջանի մը զլուխը կը կազմէ եկեղեցւոյ երկհազարամեայ պատմութեան մէջ:

Նախ եւ առաջ Յովհաննէս ԻԳ. ուղեց շարունակող մը ըլլալ: Իր առաջին իսկ ճառերով՝ չքնաղ շրջանակներու մէջ զետեղեց իր մեծահոգակ նախորդները, որոնց լուսաշող օրինակէն շատ ներշնչուեցաւ:

Պիոս Թ. Պապէն ան ժառանգեց անտառակոյ Տիեզերական Ժողովի զաղափարը, բարեպաշտ ուխտագնացութիւններու ախորժը եւ Ժողովուրդին հետ սերտ շփում ունենալու բաղձանքը: Լեւոն ԺԳ. Պապէն առաւ քաջարի նուիրումը ընկերական հարցերու լուծումին եւ արդի աշխարհի ուսումնասիրութեան: Պիոս Ժ. Սուրբ Պապը իրեն ներշնչեց քահանայական սրբութիւնը. իր առաջին պատարագին օրը, նորընծայ Ռոնքալլիի զօրացեր էր այն սուրբ Քահանայապետին մասնաւոր օրհնութեամբ, եւ օրհնութեան հետ՝ ծծեր էր անոր անոյշ բարութիւնը: Անոր նման ինքն ալ աղքատ ծներ էր. անոր նըման կ'ուզէր աղքատ մնալ. անոր նման ինքն ալ Վենետիկի Պատրիարք եղած էր: Բենեդիկտոս ԺԳ. այնքան քիչ ճանչցուած, բայց եւ այնքան մեծ, աշխարհի եւ Ժողովուրդներու խաղաղութեան եւ հաշտութեան ի նպաստ կատարած զերով՝ մեծ առաջնորդ մըն էր: Պիոս ԺԱ. Պապին մէջ կը տեսնէր առաքելական եռանդը եւ սէրը՝ նորակազմ Ժողովուրդներու հանդէպ: Իսկ Պիոս ԺԲ. Քահանայապետի մէջ հիացումով կը նշմարէր «Երկնային իմաստութեան լուսաշող զանգեր», ինչպէս նաեւ «բուռն եռանդ իմաստական կեանքի՝ Բրիստոսի մատրէն ջերմացած» (Ծնունդի Ռատիոպատգամ, 1958):

ԲԵՂՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Քալելով այսպիսի մեծ Հայրապետներու հետքերէն, Յովհաննէս ԻԳ. ժառանգելով անոնց հոգին, պիտի մնայ պատմութեան մէջ իբր Տիեզերական Ժողովի

Պապը: Ինք ծնաւ դադարաւ, ինք ի դործ դրաւ իր բոլոր իշխանութիւնը՝ իրաւոր- ծելու համար այս ամենադժուարին դոր- ծը, հաստատակամ ու անտեղիտալի կո- րովով ու յարատեւութեամբ: Կազմակեր- պեց իր բոլոր մանրամասնութեանց մէջ՝ նախապատրաստական շրջանը, անձամբ հետեւեցաւ պատրաստական աշխատանք- ներուն, եւ իր անդուդական հաւասարա- կշռութեամբ՝ իր շուրջ համախմբեց հա- զարաւոր եպիսկոպոսները ամբողջ աշ- խարհի:

Յուզումով ու երկիւղած հաւատքով յայտարարեց անոր բացումը 1962ի Հոկտ. 11ին, աննախընթաց հանդիսաւորու- թեամբ, մասնակցութեամբ 2500 եպիսկո- պոսներու, եւ օրը օրին հետեւեցաւ առա- ջին նստաշրջանի բոլոր աշխատանքնե- րուն, լաւատես տրամադրութիւններով եւ քաջալերական դիրքով:

Մեծ Ժողովին առնթեր, ժամանակին պահանջներուն հետ քայլելու արդիական հոգիով առջուն, հակառակ իր ծերունա- զարդ տարիքին, ձեռնարկեց վերաքննելու եւ վերամշակելու եկեղեցական կանոնա- դիրքը:

Եկեղեցւոյ պահանջները խորապէս ըմ- բռնելով, հակառակ կանոնական հին սահ- մանումներու եւ սեղմումներու, Ծիրա- նաւորներու թիւը բարձրացուց 70էն մին- չեւ 88: Իր քահանայապետութեան կար- ճատեւ շրջանին 52 նոր Ծիրանաւորներ սահմանեց. առաջին անգամն ըլլալով՝ ճափոնն ու Փիլիպպեան կղզիները ունե- ցան իրենց բնիկ Ծիրանաւորները. առա- ջին անգամ ըլլալով՝ սեւամորթ Եպիսկո- պոս մը, Թանկանիքացի, մտաւ Ծիրանա- ւորներու դասին մէջ:

Յօթը կոնգրակներ հրատարակեց իր Հայրապետութեան չորս ու կէս տարուան բնթացքին, որոնցմէ երկուքը համաշխար- հային արձագանգ ունեցան եւ պիտի մը- նան եկեղեցական զրուի դործոցներ: Ա- ռաջինը, «Մայր եւ Դաստիարակ» (հրտ. 15 Մայիս 1961ին), նուիրուած է ընկե- րային հարցերու. զլիսաւորապէս կը ծա- նրանայ զեղծուի ու բանուոր դասակար-

դին վրայ, որոնք իր սրտին աւելի մօտիկ էին եւ միաժամանակ իր դուրդուրտ ու- չադրութեան առարկայ. կը ճառէ անոնց իրաւունքներուն, պահանջներուն եւ պար- տականութեանց մասին, կեանքի եւ ա- պրելակերպի լաւագոյն պայմանները քա- տելով իր հարկաւորութեան մասին. կու տայ Աւետարանական սկզբունքներու վը- բայ հիմնուած լուսաւոր պատճառաբա- նութիւններ, վերլուծումներ եւ յորդոր- ներ: Երկրորդը, «Խաղաղութիւն երկրի վրայ» (հրտ. 11 Ապրիլ, 1963), նուիր- ուած է աշխարհի խաղաղութեան, մարդ- կային անձին արժանապատուութեան եւ իրաւունքներուն վերլուծումին, Ժողո- վուրդներու հաւասարութեան սկզբունքի պանծացումին, նոյնիսկ սխալ վարդապե- տութիւններ քարոզողներու հանդէպ բա- րեացակամ վարմունքի նուրբ ու հայրա- կան խորհրդածութիւններով:

ԲԱՐԻ ՀՈՎԻԻԸ

Կը սիրէր կոչուիլ յատկապէս «Հռոմի Եպիսկոպոս»: Եւ իբր այդ՝ կազմակեր- պեց Հռոմի եկեղեցական սիւնհոգոսը, զոր ոչ ոք կ'աղնկալէր. իսկ իր մօքին մէ- ջէն, այդ Ժողովով՝ կ'ուզէր յաւիտենա- կան քաղաքին տալ օրինակելի եւ առաջ- նորդական դեր մը ամբողջ եկեղեցական թեմերուն կազմակերպութեան մէջ:

Կը սիրէր յատկապէս Ժողովուրդը, իր հօտը: Եւ իջաւ իր գլեակէն. մտաւ Ժողո- վուրդին մէջ: Մասնակցեցաւ Մեծ-Պահլի աղաշխարհական թափօրներուն, այցելեց զեւրոպայական երկրները, զերեզմանոցները: Յուզուեցան ամէնքը՝ երբ տեսան սղի- տակաղղեստ ու Ժպտուն Հայրապետը բանտերու մէջ, հիւանդանոցներու մէջ, որբանոցներու եւ մանկամուրներու մէջ, մահամերձ Ծիրանաւորի մը սնարին, հի- ւանդ եկեղեցականի մը սենեակը. եւ ա- պա Հռոմէն ալ դուրս, մինչեւ Լորեթոյ, մինչեւ Ասիոյ:

Ամէնուն համար ունէր ան անոյշ խօսք մը, քաջալերանք ու նոյնիսկ փայլալայնք: Կ'այցելէր նոյնիսկ իր փոքրիկ թաղա-

ւորութեան յարկաբաժինները. զրադա- րանը, աստղադիտարանը, պաշտօնարան- ները. կը հետաքրքրուէր մինչեւ անգամ տպարանի աշխատակորներու եւ պարտիզ- պաններու օրափարձերով: Վենետիկի Պա- տրիարքութեան շրջանէն քաղցր յիշա- տակներ ունին իրմէ քաղաքին կոնտրա- վարները. իսկ քահանայապետութեան շրջանէն՝ Հռոմի 3-500 աւելած ունեւոր, որ- ռոնց մասնաւոր ունկնդրութիւն կը շնոր- հէր ձիւտ իր անուան տօնին օրը, 1959ին:

Կ'այցելէր կղերանոցները, եկեղեցիներ- րը. կը հետաքրքրուէր ամէնուն վիճակով ու հայրական քաջալերիչ խօսքերով կ'ո- ղեւորէր սրտերը: Զարմանալիօրէն հա- յորդական ջերմութիւն մը ունէր, որով կը կազմէր ամէնէն կարծր սրտերն ան- զամ: Չէր խնայեր իր ոյժերուն, իր միակ ըզմանքն էր նուիրուիլ ու սպառիլ ամէ- նուն համար:

Կարճէք Քրիստոս իջած էր իր մէջ, աշ- խարհ ամբողջ առնչեցելու զէպի Աւետա- րանին իրական ապրումը:

ԱՂԲԱՏ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Աղքատ ծնած, սիրած էր աղքատ ալ ապրիլ, արտաքին փառքերու եւ շացու- ցիչ ճոխութեան մէջ իսկ: Քահանայապե- տութեան թաղապետութեան հանդէսին օ- րը, մինչ ուսումը դահաւորակի վրայ կը տանէին զինք, անիկա կը յիշէր թէ ինչպէս երբ մանուկ էր՝ խոտի զէպով լե- ցուն կառքին վրայ կը բազմեցնէր զինք իր երկրագործ հայրիկը:

Աղքատութիւնը առաջին պայմանն է քրիստոնէական Աւետարանին. եւ Յով- հանէն ԻԳ. Պապը եկած էր աշխարհ՝ քարոզելու այդ աղքատութիւնը իր իսկ օրինակով: Ահա թէ ի՞նչ կ'ըսէ իր կը- տակին մէջ. «Աղքատ ծնած, բայց պատ- ուաւոր եւ համեստ ընտանիքի, յատկա- պէս գոհ եմ անոր համար՝ որ կը մեռնիմ ալ աղքատ, բաշխած ըլլալով ինչ որ ձեռ- քիս կը հանդիպէր - քէեւ շատ չափաւոր - զանազան պարագաներու եւ պահանջնե- րու համաձայն՝ ի նպաստ աղքատներու եւ Ս. Եկեղեցւոյ, որ զիս սնուցած է, իմ

փառանքական եւ Եպիսկոպոսական կեան- քիս ընթացքին: Բարեկեցիկ երեւոյթը յաւախ ծածկած է ներքին վիշտերը մտա- հոգիչ աղքատութեան, որով շատ անգամ չեմ յաջողած տալ առատօրէն, այնպէս՝ ինչպէս կը փափաքէի: Շնորհակալ եմ Աստուծոյ՝ աղքատութեան այս շնորհքին համար. արդէն աղքատութեան ուխտն ը- րած էի երիտասարդութեանս, իբրեւ փա- հանայ Ս. Սրտին, հոգեկան ու իրական աղքատութեան: Եւ ատիկա է որ զօրա- ցուց զիս՝ ամենեւին չտենչալու ոչ գահ, ոչ դրամ, ոչ առանձնաշնորհում, ոչ ին- ծի, ոչ ալ ազգականներու կամ բարե- կամներու համար»:

Կը կարծենք թէ աշխարհս բոլորովին տարբեր կերպարանք կ'առնէր՝ եթէ եր- կրագունդիս բոլոր քահանաները այսպի- սի ապրումներու տենչացող ըլլային եւ նման տրամադրութիւններով զործէին միշտ:

Աղքատութեան հետ ունէր պարզունակ խոնարհութիւն մը: Բազմաճմուտ դիտ- նական մըն էր, եկեղեցապատմական ու հայրախօսական հարցերու քաջատեղեակ. հրատարակած էր մեծածաւալ եռահատոր աշխատութիւն մը Ս. Կարոլոս Պորրոմէո- սի զործունէութեան եւ դարաշրջանի մա- սին: Սակայն այդ բոլորը զիտէր ծածկել համեստ Ժպիտի մը տակ, սրամիտ կա- տակի մը զուարթութեան մէջ: Մինչեւ անգամ իր անողոք հիւանդութիւնը յաջո- դեցաւ ծածկել ամէնքն:

Ահա՛ իր մեծութեան եւ բեղուն դոր- ծունէութեան զաղանքը: Ահա նաեւ թէ ինչու ամէնքը կը սիրէին զինքը: Որով- հետեւ Յովհաննէս ԻԳ. Պապը լրիւ կը զործադրէր Աւետարանը:

ՀԱՅՈՅ ՀԵՏ

Մեծ սրտով այս Հայրապետը ամէն կողմ կը սիրէ ու կը սիրուի. կը սիրէ ա- մէնքը եւ կը սիրուի բոլորէն: Արեւելքի

2 Տե՛ս Ի L'Osservatore Romano, 1963, 7 Giu- gno, CI, N. 131 (31.303) pg. 1.

մէջ իր երկար պաշտօնավարութեան շրջանին, բարեկամական կապեր կը ստեղծէ ժողովուրդներու եւ ազգայեաններու հետ: Յատկապէս Նիկոմիդիոյ նախկին Առաջնորդ՝ Ստեփանոս Արքեպիսկոպոս Յովակիմեանի հետ կ'ունենայ սրտակից բարեկամութիւն:

Վենետիկի Պատրիարք եղած միջոցին, յաճախ առիթն ունեցած ենք խօսելու Ծիրանաւոր Ռոնքալիի հետ. յուզումով կը յիշէր, զրեթէ ամէն այցելութեան, Յովակիմեան Սրբազանը. կը վերակոչէր անոր խօսքերը, պատկառելի անձը, առաքելատիպ հոգին: Անոր յիշատակը քանիցս վերաբծարծած էր նաեւ իր քահանայապետութեան շրջանին: Նախ 1959ի Փետրուար 1ին, երբ մասնաւոր ունկնդրութիւն կը շնորհէր հայ գաղութին (տես Բազմ. 1959, թիւ 1-2, էջ 1-8): Երկրորդ անգամ, երբ Տիեզերական Վատիկանեան Բ. Ժողովի բացման օրերուն, մասնաւոր ունկնդրութիւն կը շնորհէր ոչ-կաթոլիկէ եկեղեցիներու կողմէ զրկուած նուիրակ զէտերուն (1962, Հոկտ. 13): Այդ օրն ալ Յովակիմեան Սրբազանի յիշատակը կ'արթննար Յովհաննէս ԻԳ. Պապի մտքին մէջ, ի տես մանաւանդ Արեւելքի այդ պատկառելի ներկայացուցիչներուն: Առանց, սակայն, անունը տալու Յովակիմեան Սրբազանին, կ'ըսէր.

«Հեռաւոր օր մը, Արեւելքի պատկառելի ձերբնադարդ եկեղեցականի մը յանձնեցի Պրոս ԺԱ. Պապին մէկ մետալը: Քիչ յետոյ, այդ ձերբնադարդ երբ իմ աչքերը պիտի փակէր այս աշխարհի լոյսին, փափաք կը յայտնէր որ իմ մահէն ետք՝ այդ մետալը դնեն իմ սրտին վրայ: Ու ես այդպէս ալ տեսայ աչքովս. այս յիշատակը դեռ աւելի կը յուզէ զիս: Այս զրուակը կը փափաքիմ յատկապէս յիշատակել այստեղ, որովհետեւ իմ յուզիչ պարզութեան մէջ, կարելի է նմանցնել դաշտի ծաղիկի մը, որ եղանակներու փոփոխումով՝ կը վերածաղկի, կը քաղուի ու կը նուիրագործուի»:

Յովհաննէս ԻԳ. Սրբ. Քահանայապետ կարծէք կ'ուզէր տեսնել Յովակիմեան

Սրբազանի մէջ՝ հայ եկեղեցւոյ աւանդական դաւանանքը, նահատակ ժողովուրդի մը անկողմ հաւատքը, խոստովանողի չարչարանքներով նուիրականացած: Կարծէք Յովհաննէս ԻԳ. Պապի համար Յովակիմեան Սրբազանն ըլլար միութեան խորհրդանշը, միութեան կամուրջը՝ ընդ մէջ Արեւելքի եւ Արեւմուտքի. եւ կը սիրէր անոր մէջ ամբողջ հայ ազգը, հայ եկեղեցին: Չէ՞ որ ինք դեսպանութիւն մը կատարած էր Յովակիմեան Սրբազանի կողմէ առ Պրոս ԺԱ. Պապը, անոր տեղ՝ ողջապահելու եւ յարգելի չամբոյրով պատուելու Սրբազան Պապը:

Յովհաննէս ԻԳ. Քահանայապետ լսած էր նաեւ խորհրդաւոր խօսք մը՝ Յովակիմեան Սրբազանի բերնէն. «Մենք եկեղեցականներս մեծ ու աններելի մեղք մը ունինք» ըսած էր Նիկոմիդիոյ Առաջնորդը Պապին. եւ աւելցուցած էր. «Քրիստոս մեզի յանձնած էր իր եկեղեցին եւ մենք զանիկա բաժան բաժան ըրած ենք. ատոր համար քրիստոնեաները քրիստոնեաներու թշնամի դարձուցինք...»: Յովհաննէս ԻԳ. իսկապէս շատ ազդուած էր Յովակիմեան Սրբազանի կատարած նուրբ զիտողութենէն. կը խորհրդածէր այդ աստուածարեալ խօսքերուն վրայ: Եւ ո՞վ ըսաւ թէ միութենական շարժումի ի նըպատ կատարած հսկայական ճիւղերը շարժած չէին Յովակիմեան Սրբազանի պարզ ու անկեղծ այդ խորհրդածութիւններէն:

Յովհաննէս ԻԳ. շատ կը սիրէր Հայերը. կը ճանչնար յատկապէս Միաբարեան Հայերը, յաճախ կը մասնակցէր անոնց զպրոցական հանդէսներուն, մանաւանդ Փարիզ եղած միջոցին: Պուրկարիայէն նամակադրական թղթածրար մը կայ Ս. Ղազարու գիւանին մէջ. Ռոնքալիի սիրտն հոն է. կը զրազի հայ որբերով, տղաքներով, աշակերտ կը յանձնարարէ Մուրատ-Ռափայէլեանի համար: Նոյն ողիով նաեւ **Իսթանպուլէն, Թրանսպէն, Բարեկամական սերտ ու հոգեկան կապեր ունեցած է մանաւանդ Գերջ. Հ. Յովհան Արքեպիսկոպոս հետ, Հ. Սահակ Վրդ. Տէր**

Մովսէսեանի եւ Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանի հետ:

Հայրական դուրսերանք եւ յարգանք կը տածէր Միաբարեան Միաբանութեան հանդէպ: Պապ ընտրուելէն քանի մը ամիս առաջ, Ս. Ղազարու մէջ տեղի ունեցող միաբանական ընդհանուր ժողովին կը բերէր իր շնորհաւորութիւնները, եւ անձամբ կու դար վանք, ողջունելու վերընտիր Արքեպիսկոպոս (1958, Յուլիս 17): Երկու տարի վերջ, քահանայապետական մասնաւոր զրով, կը հաճէր արքեպիսկոպոսական աստիճան ու պատիւ շնորհել Ուխտիս Ընդհ. Արքեպիսկոպոս, Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոնեանի (1960, Օգոստոս 13): Իսկ 1962ին, Միաբար Արքեպիսկոպոսի շնորհակցութեան արձանի բացման հանդէսին, Վսեմ. Ծիրանաւոր Ազատեանեան Կաթողիկոսին հետ Ս. Ղազար կը զրկէր մասնաւոր շնորհաւորական զիր, օրհնութեան նամակ ու նուէրներ:

Բոլորովին անտեղի կը դառնայ «Յառաջ» թողոքը (24 Ապրիլ 1963), որ կ'ուզէր ըսել Սրբ. Պապին՝ թէ ինչո՞ւ 1962ի եւ մանաւանդ 1963ի Ձատիկին, բազմաթիւ լեզուներով՝ բազմաթիւ ազգերու շնորհաւոր Ս. Ձատիկ մաղթելու ատեն, հայերէն ալ չէր արտասանած քանի մը բառ: Մեծ սրտերուն, տիեզերական մտահոգութիւններով բարախող սրտերուն՝ չէ՛ կարելի ուղղել - ըստ մեզի - նման պղտիկ հարցում. ասիկա նուաստութիւն է հարցնողներուն. անառակ որդիին երէց եղբոր նախանձոտ հարցումին կը նմանի:

Կը կարծենք թէ չէ՛ր վայելեր նահատակ ժողովուրդի մը արժանապատուութիւնն ունեցող դաւաններուն՝ այս ձեւով վերաւորել բարի հայրիկին սիրտը, որուն մէջ տեղ կը գտնէին բոլոր ազգերը անխորտիր:

Յովհաննէս ԻԳ. Պապի մահը խոր սուգի մէջ թողած էր նաեւ Ս. Ղազարը. ու Գերպ. Սրապիոն Արքեպիսկոպոս Ուլուհոնեան անձամբ կը փութար Հռոմ, մասնակցելու տիեզերական սուգին եւ թաղմանական յուզիչ արարողութեանց, հանդուցեալ մեծ Քահանայապետին առջեւ սփռելու, վերջին անգամ մըն ալ, Միաբարի որդիներու անկեղծ յարգանքը, եւ սղաւոր եկեղեցւոյն ներկայացնելու սրտազին վշտակցութիւնը Միաբանութեան:

Վստահ ենք, սակայն, որ երանելի Հայրապետը այժմ երկնքէն, կը շարունակէ՝ իր հօր միջնորդութեամբ առաջնորդ ըլլալ միութենական այն հսկայ շարժումին, որ Տիեզերական Ժողովին հետ պիտի կազմէ ոչ միայն իր, այլ համօրէն աշխարհի եւ սուրբ եկեղեցւոյ փայլն ու պարծանքը:

Մենք աղօթող ենք որ Յովհաննէս ԻԳ. Պապի եւ Յովակիմեան Սրբազանի յիշատակները եւ խօսքերը առաջնորդ ըլլան բոլոր հայ եկեղեցականներուն՝ դառնալու համար քրիստոնէական առաջին դարու սուրբ միութեան, ի համբոյր սրբութեան:

Հ. Ն. ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ